

հանդերձ ամենայն անուշահոտ խնկաւք եղեալ եւ կնքեալ քրիստոսական¹ կնքովն՝ եւ զաւրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այնուհետեւ իւրաքանչիւրն դառնային: 6 Որոց² եւ նոյնպէս ամի ամի գումարելովք ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն³ տաւնախմբեն⁴:

[ԻՉ]

7 Իսկ երանելի զուգականին⁵ լուեալ, զՄաշթոցէ ասեմ, բազում անձկայրեաց⁶ տրտմութեամբ եւ արտասրագութեամբ⁷ ողբովք եւ ծանրաթախիծ սգովք⁸ պաշարեալ դներ. զի թէ⁹ առաքեալն սուրբ ոչ գտեալ առժամայն զընդեակիցն զՏիմոթէոս՝ անհանգիստ զհոգւոյն ասէ, ո՛րչափ եւս առաւել զմիանգամայն զիրաժարելոցն¹⁰, սաստիկ կիրս մնացելոցն¹¹ է համարեալ: 2 Բայց թեպէտ եւ միայնաւորութեան¹² տրտմութիւն¹³ չթողոյր զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացսն եւ զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ¹⁴ շնորհաւքն¹⁵ Աստուծոյ առանց պակասութեան¹⁶ տանէր, եւ առաւել¹⁷ փութայր գուն եղեալ՝ զամենեսեան յորդորելով առ բարեացն քաջութիւն: 3 Եւ զցայգ եւ զցերեկ պահաւք եւ¹⁸ աղաւթիւք եւ ուժգին խնդրուածովք եւ բարձրագոյն բարբառովք¹⁹, զաստուածադիր²⁰ պատուիրանացն, հրամանս յուշ²¹ առնելով՝ զգուշացուցանէր²² ամենայն մարդոյ, մինչեւ բազմագոյնս եւ²³ զդժուարագոյն¹ վարուց կրթութիւնս². մանաւանդ զի եւ

1 c քրիստոսադորոշմ / վ քրիստոսադորոշ

2 bc որոյ

3 c ի նոյն յիշատակսն

4 b տոնախմբել

5 b զուգականին

6 Ճա Ճք իսկ երանելւոյն Մեսրոպայ բազում անձկայրեաց / b անձկարեաց / c անձկալեաց

7 Ճա Ճք արտասրակաթ

8 de ոգւով / b Ճա Ճք հոգովք փիւ. սգովք

9 Ճա Ճք չիք զի թէ միկնել համարեալ

10 b զիրաժարելոյն

11 b մնացելոյն

12 bc միայնաւորութիւնն / Ճա Ճք մենաւորութեան

13 bc Ճա Ճք տրտմութիւնն

14 Ճա Ճք զվերակացութիւնն եկեղեցւոյ սրբոյ

15 e շնորհոք

16 b պակասութեանն

17 Ճա Ճք չիք եւ առաւել միկնել քաջութիւն

18 Ճա Ճք չիք պահոք եւ

19 d Ճա Ճք բարբառով

20 abcdeվ աստուածադիր

21 Ճա Ճք զաստուածադիր չիք պատուիրանացն / զհրամանն յուշ / bcde յուշ / ae ուշ

22 b Ճա Ճք զգուշացուցանէր / միկնել. զգուշացուցեալ

23 Ճա Ճք չիք եւ (զմտաւ)